ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ԹԻՎ 10-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԹԻՎ 4-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 4-Լ հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 25-րդ կետի 11-րդ և 27-րդ կետի 4-րդ ենթակետերում «.» կետադրական նշանը փոխարինել «:» կետադրական նշանով.

2) ուժը կորցրած ճանաչել 25-րդ կետի 12-րդ և 27-րդ կետի 5-րդ ենթակետերը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2026 թվականի փետրվարի 15-ից:

3. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել Ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի գործունեությունը:

Արփինե Սարգսյան
02.02.2026

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ